

ՊԱՇՏՕՆԱԿԱՆՔ

ՔԱՂՈՒԱԾՔ ՅՕՐԱԴՐՈՒԹԵԱՆՑ ՍԻՆՈԴԻ

— Ի 19-ն դեկտեմբերի Սինոդն հրամայեաց—ունելով առաջի աչաց՝ զի Նորին Օրբութիւնն մակագրութեամբ պատուիրեալ էր Առաջնորդի թեմին Հայոց Վրաստանի մտանել ի բանակցութիւն ընդ Տ. փոխարքայի Կովկասու վասն տեղափոխութեան Հոգևոր Կառավարութեան Գօրուոյ յայդ քաղաքէ ի Բաթում՝ և այդու իսկ արտայայտեալ է զիւրն հաճութիւն վասն խնդրոյս, ուստի և մտանելով ի քննութիւն խնդրոյս ըստ էութեան՝ Սինոդս գայ յեզրակացութիւն՝ զի կարևոր է առնել զտեղափոխութիւնն։ Զայսմանէ ծանուցանել Դիւանի փոխարքայի Կովկասու, ի լրումն և ի փոփոխումն նախկին գրութեան թ. 2653, և տալ գիտել Առաջնորդի թեմին Հայոց Վրաստանի։ Հ. 940.

— Ի նմին թուի Սինոդն հրամայեաց անպարտ համարել զծխատէր քահանայն Ներքին Խաթունարխ գեղջ գաւառին

Էջմիածնի զՅովհաննէս Տէր Յովհաննիսեան ի մեղադրանաց, բարդելոց ի վերայ նորին ի Թէոսէ Շահբազեան և կարճել զայս գործ։ Հ. 941.

— Ի նմին թուի Սինոդն հրամայեաց—ունելով առաջի աչաց՝ զի խնդիր անհաւատարմութեան ծառայողաց ազարակի և անտառի վանուց կարօտի բազմակողմանի քննութեան և զի յօրէ հրաւիրելոյ զՄելիք-Շահնազարեանցն ի պաշտօն գիւղատնտեսի Մ. Աթոռոյ չէ լեալ քննութիւն հաշուոց նորա՝ ուստի կարգել զմասնաժողով մի, կազմեալ ի միաբանից Մ. Աթոռոյ ի Լևոն վարդապետէ, ի Ներսէս վարդապետէ և ի տնտեսէ ճեմարանի ի Մեսրովբայ Աբովեան, որոց յանձնել ի քննութիւն որպէս զյայտարարութիւն գիւղատնտեսի, նոյնպէս և զհաշիւ նորա յօրէ մտանելոյ նորա ի պաշտօն գիւղատնտեսի մինչ ցմին առաջիկայ յունուարի, և զարդիւնս քննութեան մատուցանել Սինոդիս։ Հ. 949.

— Ի 21-ն դեկտ. Սինոդն հրամայեաց—պատուիրել կառավարչի Մ. Աթոռոյ, որ ի Տփխիս, Տ. Եփրեմ վարդապետի վճարել հետզհետէ Արտեմի Ղարիբեան յարդեանց կալուածոց զպարտս Գէորգեան Հոգևոր ճեմարանի Մայր Աթոռոյ ի գին գնեալ ի նմանէ մահուան, ի գումար երեք հազար ռուբլեաց (3000 ռ.) և յիւրաքանչիւր նուագի վճարի զքանակէ նորին տալ տեղեկութիւն Սինոդիս։ Հ. 954.

— Ի 24-ն դեկտ. Սինոդն հրամայեաց—վասն բազմիցս կրկնեալ զեղծմանց Մարկոս քահանայի Մկրտչեան Ղզըլչախչախ գեղջ նահանգին Կարուց—դադարեցուցանելով զնա ի քահանայագործութենէ, առաքել յապաշխարհութիւն ի վանս Սևանայ վեց ամսեայ ժամանակաւ։ Ի կատարումն վճռոյս հանել հրաման Կոնսիստորիային Երևանայ, պատուիրելով նմա տնօրինել վասն հովութեան ծխականաց և արդեանց Մարկոս քահանայի։ Հ. 962.

— Ի 28-ն դեկտ. Սինոդն հրամայեաց—յանձն առնել փոխ. թեմակալին Երևանայ հրաւիրել զժառանգս Գէոր-

դայ Զաքարեան Գէորգեանց Երեւանցւոյ ի մատուցանել Սինոդիս զբանկային տոմս տասն հազար րուբլեաց, յանձնելոց նմա յաւանդ ի հանգուցեալ Հայրապետէ, հանդերձ օրինասահման տոկոսեօք նոցին, յընթացս երկուց եօթնեկաց, և զհետեւանս յայտ առնել Սինոդիս։ Հ. 964.

— Ց 31-ն դեկտ. Սինոդն հրամայեաց—նկատելով Կոնսիստորիային Աստրախանի զինքնագլուխ յաւելումն ռոճկագրամոց ծառայողաց դիւանի նորին՝ պատուիրել նմին ճշտիւ ի կատար ածել զհրամայեալն ի Սինոդէս, բաշխելով զռոճիկ ծառայողացն ըստ հաստատեալ ցուցակի ծախուց և յամսոյ ամիս բառնալով ի ռոճկագրամոցն աւելորդաբար տուեալն, և զկատարածն յայտ առնել Սինոդիս։ Հ. 975.

— Ի նմին թուի Սինոդն հրամայեաց—պատուիրել կոնսիստորիային ճշտիւ ի կատար ածել զհրաման Սինոդիս ի 6 օգոստոսի տարւոյս թ. 1610, բաշխելով զռոճիկս ծառայողաց ըստ հաստատեալ ցուցակին ծախուց։ Հ. 978.

— Ի 4-ն յունուարի Սինոդն հրամայեաց—պատուիրել Կոնսիստորիային Նոր-Նախիջեւանի և Բեսարաբիոյ յայտնել Ներսէս քահանայի Հերթեցեան, եթէ պարտի նա նախ առանց այլեւայլութեան ի կատար ածել զվճիռ Սինոդիս, որ վասն գնալոյ յապաշխարհութիւն ի վանս Սեւանայ. և ապա թէ յարուցանել նոր խնդիր վասն պաշտաման կամ այլոց կարեաց իւրոց։ Հ. 7.

— Ց 9-ն յունուարի Սինոդն հրամայեաց տալ պատասխանի պ. Գրիգորի Կիրակոսեան, եթէ Սինոդս չունի ինչ յաւելուլ ասել նմա յետ հրամանաց սորին, որ յ19 հոկտ. անցելոյ ամի, թ. 2291 և ի 23 նոյեմբ. նոյն ամի, թ. 2616, և եթէ պ. Կիրակոսեանն յընթացս միոյ եօթնեկի ոչ արկցէ ձեռն ի գործ շարունակութեան աշխատանաց հանելոյ ջրոյ, ըստ խոստման իւրում, Ատեանս ազատ զինքն համարեսցէ վարիլ ըստ իւրում հայեցողութեան։ Հ. 9.

—Ի 21-ն յունուարի Սինոդն հրամայեաց—նախ՝ հաստատել զնախահաշիւ մտից և ելից տպարանի վասն այսր 1908 ամի ի գումար քսան հազար չորս հարիւր ռուբլեաց մտից և հնգետասան հազար երեք հարիւր յիսուն և հինգ ռուբլեաց և 08 կ. ելից և զվաւերացուցեալ պատճէն նորին առաքել առ վարչութիւն տպարանի ի կիրառութիւն։ Երկրորդ՝ շրջաբերական հրամանաւ յանուն ամենայն Կոնսիստորիայից Հայոց Ռուսիոյ պատուիրել Հոգևոր Կառավարութեանց և գործակալաց, զի փութասցին ի ժողովել զամենայն ապառիկս գնոց «Արարատ» ամսագրի, օրացուցաց, ժապաւինեալ մատենից և այլն և առաքել յայսմհետէ ոչ ի Սինոդս, այլ առ վարչութիւն տպարանի, այլ և զգին նոյն մատենից, օրացուցաց և առհասարակ զամենայն հասոյթս տպարանի յայսմ ամի առաքել անմիջապէս առ վարչութիւն նորին, գուն գործելով, զի դրամքն առաքեսցին յառաջնում իսկ կիսամեկի տարւոյ և տալ տեղեկութիւն Սինոդիս առանձին յայտարարութեամբք։ Երրորդ՝ պատուիրել ամենայն Կոնսիստորիայից, Հոգևոր կառավարութեանց և գործակալաց, զի փութով առաջի արասցեն վարչութեան տպարանի զճիշտ հաշիւ վաճառելի եկեղեցական մատենից, զքանակութենէ վաճառելոցն և զմնացելոցն առ ինքեանս, այլ և ծանուցանել թէ երբ և յանուն որոյ առաքեալ են գինք վաճառեալ գրենոյն։ Հ. 38.

—Ի 23-ն յունուարի Սինոդն հրամայեաց—առաջադրել ամենայն Կոնսիստորիայից Հայոց Ռուսիոյ տնօրինել, զի ամենայն եկեղեցիս Հայոց շրջնցուսցի գանձանակ յօգուտ զինուորաց և ընտանեաց նոցա, ելեալոց ի ռուս ճապոնական պատերազմի, յառաջին երիս կիւրակէս մեծի պահոց և զհանգանակեալ դրամս առաջի առնել Սինոդիս։ Հ. 41.

Ամուսնալուծութիւնք

— Ի 21-ն դեկտեմբերի Սինոդն վերստին ի քննին առեալ ղհանգամանս գործոյն խնդրատուի բնակչուհւոյ Զէյվա գեղջ գաւառին Էջմիածնի Նազանի Կիրակոսեան և ի նկատ առեալ զյառաջ բերեալ պատճառաբանութիւնս պ. պաշտօնակատարի պրոկուրորի Սինոդիս, հրամայեաց—լուծանել զպսակ Նազանւոյ Կիրակոսեան ընդ Համբարձումայ Խաչատրեանց, տալով կնոջն իրաւունս մտանելոյ ի նոր ամուսնութիւն ընդ այլում։ Հ. 952.

— Ի 24-ն դեկտ. Սինոդն հրամայեաց—ի պատճառս անդամալոյծ գոլոյ բնակչուհւոյ Խաչիկ գեղջ Նախիջևան գաւառի Իսկուհւոյ Մելիք-Մատթէոսեան, լուծանել զպսակ նորա ընդ Յովհաննէսի Յակովբեան, տալով առն իրաւունս մտանելոյ ի նոր ամուսնութիւն ընդ այլում։ Ի կատարումն վճռոյս հանել հրման Կոնսիստորիային Երևանայ, որում և պատուիրել նախ քան զթոյլտուութիւն պսակի Յովհաննէսի Յակովբեանց պատուիրել զնա ստորագրութեամբ, վաւերացուցմամբ ի ձեռն նոտարի, վճարել Իսկուհւոյ Մելիք-Մատթէոսեան ըստ կարողութեան իւրում և ըստ որոշման վստահելի անձանց ի բնակչաց գեղջն յամի ամի դումար ինչ յապրուստ Իսկուհւոյ կամ միանուագ դումար դրամոց։ Հ. 963.

— Ի 28-ն դեկտ. Սինոդն հրամայեաց—համեմատ եզրակացութեան Կոնսիստորիային Երևանայ լուծանել զպսակ բնակչուհւոյ Վաղարշապատ գեղջ Մադդաղայ Խաչատրեան ընդ Գեղամայ Լալազարեան, տալով կնոջն իրաւունս մտանելոյ ի նոր ամուսնութիւն ընդ այլում, իսկ առն տալ իրաւունս պսակի զկնի ենթարկելոյ զնա եռամսեայ եկեղեցական ապաշխարանաց։ Հ. 969.

— Ի Նմին թուի Սինոդն հրամայեաց՝ քանզի ըստ բժշկական վկայութեան բնակիչ Աշտարակ գեղջ Էջմիածին գաւառի Պապիկն Երեսփոխեանց է ընդունակ առ ամուսնական պարտիս, ուստի և համեմատ եզրակացութեան Կոնսիստորիային մերժել զխնդիրն Երեսփոխեանց ամուսնոց, որ վասն լուծման պսակի նոցա։ Զայսմանէ տալ գիտել Պապիկի Երեսփոխեանց և Սաթինկան Փիլոյեան ի ձեռն Կոնսիստորիային Երևանայ, դարձուցանելով զգործն և պատուիրելով նմա ի ձեռն գործակալին յորդորել զԵրեսփոխեանց ամուսինս գալ ի համաձնակութիւն ընդ միմեանս սիրով և խաղաղութեամբ ըստ ուխտի ամուսնութեան։ Հ. 970.

— 8 Ց-ն յունուարի Սինոդն հրամայեաց—հաստատելով զեղբակացութիւն Կոնսիստորիային, լուծանել զպսակ ընակչի Ջաֆարաբադ գեղջ Էջմիածին գաւառի Դանիէլի Խաչատրեան ընդ կնոջն Մարգարտի, թոյլ տալով առն մտանել ի նոր ամուսնութիւն ընդ այլում։ Հ. 14.

Ի 11-ն յունուարի Սինոդն հրամայեաց—հաստատելով զեղբակացութիւն Կոնսիստորիային Երևանայ, լուծանել զպսակ ընակչի Բաշ-Շիրակ գեղջ վիճակին Կարուց Կուրղինի Յովհաննէսեանց ընդ կնոջն Սիրամայրի, թոյլ տալով առն մտանել ի նոր ամուսնութիւն ընդ այլում։ Հ. 17.

Ի 15-ն յունուարի Սինոդն հրամայեաց — հաստատելով զեղբակացութիւն Կոնսիստորիային Նամախուոյ զխնդիր Բագուեցի Լևոնի Կարախանեանց, որ վասն լուծանելոյ զպսակ նորա ընդ կնոջն Սաթինկան, թողուլ առանց հետևանաց. Հ. 18.

Ի 21-ն յունուարի Սինոդն հրամայեաց — հաստատելով զեղբակացութիւն Կոնսիստորիային Ղարաբաղի, լուծանել զպսակ ընակչի Նուշի քաղաքի Անդրէասայ Արզումանեանց ընդ կնոջն Մանուշակի, տալով կնոջն իրաւունս մտանելոյ ի նոր ամուսնութիւն ընդ այլում։ Հ. 35.

— Ի 23-ն յունուարի Սինոդն հրամայեաց՝ ունելով առաջի աչաց, զի ըստ հրամանի Սինոդիս յ7 յուլիսի 1906 ամի թ. 1256 մերժեալ է խնդիր Վաղարշակայ Կարինեանց վասն լուծման պսակի նորա ընդ Աղաւնուոյ Ոսկերչեանց ի պատճառս ոչ ապացուցեալ գոլոյ մեղադրանաց, յարուցելոյ յառնէն ընդդէմ կնոջն, և այժմ ևս չիք նոր հանգամանք օրինականք, որք կարէին ծառայել իբր հիմն լուծման պսակի՝ վասնորոյ մերժել զմիջնորդութիւն Կոնսիստորիային Հայոց Վրաստանի, որ վասն լուծման պսակի Վաղարշակայ Կարինեանց ընդ Աղաւնուոյ Ոսկերչեան, զորմէ և տալ գիտել Կոնսիստորիային, դարձուցանելով զգործն։ Հ. 49.

— Ի 25-ն յունուարի Սինոդն հրամայեաց՝ հաստատելով զեղբակացութիւն Կոնսիստորիային Վրաստանի, լուծանել զպսակ Տփխիսաբնակ Ովսաննայի Նազարեանց ընդ առն Յարութիւնի Նազարեանց, թոյլ տալով կնոջն մտանել ի նոր ամուսնութիւն ընդ այլում։ Հ. 59.